

Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի
«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի
հանրապետական փուլ
11-րդ դասարան

№ 1-8

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. *Ըստ Աստվածաշնչի «Ծննդոց» գրքի՝ տապանը ե՞րբ «նստեց Արարատ լեռան վրա».*
1) հինգերորդ ամսի 27-ին *(0,5 միավոր)*
2) վեցերորդ ամսի 27-ին
3) յոթերորդ ամսի 27-ին
4) ութերորդ ամսի 27-ին

2. *Թվարկված եկեղեցիներից ո՞րը Արևելյան ուղղափառ եկեղեցիներից չէ.*
1) Ղպտի ուղղափառ եկեղեցի *(0,5 միավոր)*
2) Ասորի ուղղափառ եկեղեցի
3) Եթովպական ուղղափառ եկեղեցի
4) Ռուս ուղղափառ եկեղեցի

3. *Պսակի խորհրդի ընթացքում նորապսակների գլխին դրվող թագերը խորհրդանշում են.*
1) որ նրանք կյանքի ուրախությունների և դառնությունների ժամանակ պետք է անբաժան լինեն
2) որ նրանք համատեղ կյանքի ընթացքում պետք է պահպանեն հավատարմությունը պսակադրության ուխտին
3) որ նրանք համատեղ կյանքի ընթացքում պետք է նյութական բարիքներ արարեն
4) որ նրանց միությունը պետք է անխախտ լինի

4. *Ի՞նչ որոշումներ ընդունեց Դվինի 1-ին եկեղեցական ժողովը. (0,5 միավոր)*
1) ընդունվեցին 20 կանոններ հոգևոր և աշխարհիկ կյանքի վերաբերյալ
2) խիստ պատիժներ սահմանվեցին մծղնեականների և այլ աղանդների հետևորդների նկատմամբ
3) դատապարտվեցին նեստորականությունն ու քաղկեդոնականությունը
4) արգելվեցին բազմակնությունը և անչափահասների հետ ամուսնությունը

5. *Ինչո՞ւ Բարսեղ Բ Անեցու մահից հետո Չաքարե Չաքարյանը թույլ չտվեց բուն Հայաստանում նոր կաթողիկոս ընտրել. (0,5 միավոր)*
1) որովհետև Հայաստանում գտնվող եկեղեցական թեմերը ենթարկվում էին Հռոմկլայի Հայոց կաթողիկոսությանը
2) որովհետև նա ցանկանում էր Հայոց եկեղեցին միավորել Վրաց եկեղեցու հետ
3) որովհետև Հայաստանում եկեղեցին պառակտված էր և կաթողիկոս ընտրվելու արժանի թեկնածու չկար
4) որովհետև Հայաստանում ստեղծված հակաթոռ կաթողիկոսները չէին ընդունի Հայոց նոր կաթողիկոսի գերագահությունը

6. Ինչո՞վ ավարտվեց Մկրտիչ Ա Խրիմյանի և Նիկոլայ II ցարի հանդիպումը. (0,5 միավոր)

- 1) Մկրտիչ Խրիմյանին թույլատրվեց ռուսական բանակում արևմտահայությանն օգնելու համար քարոզչություն իրականացնել
- 2) Նիկոլայ II ցարը խոստացավ Արևմտյան Հայաստանն ազատագրելու համար ռազմական օգնություն տրամադրել
- 3) Նիկոլայ II ցարը խոստացավ արևմտահայության ծանր վիճակը թեթևացնելու համար նյութական միջոցներ հատկացնել
- 4) Մկրտիչ Խրիմյանին թույլատրվեց արևմտահայությանն օգնելու համար Ռուսաստանի հայաբնակ վայրերում հանգանակություն կազմակերպել

7. Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը. «Երբ աղոթում ես, հավաքիր խորհուրդդ, ապա սաղմոսիր»։ (0,5 միավոր)

- 1) Գրիգոր Տաթևացի
- 2) Եզնիկ Կողբացի
- 3) Դավիթ Անհաղթը
- 4) Ներսես Շնորհալի

8. Ի՞նչ է կոչվում այն խաչքարը, որի քանդակագործ երեսին պատկերված են Քրիստոսի խաչելության տեսարաններ. (0,5 միավոր)

- 1) Ամենափրկիչ
- 2) Ամենագոր
- 3) Ամենակարող
- 4) Սրբալույս

№ 9-12

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

9. Հին Կտակարանը բաղկացած է _____ գրքերից, որոնցում արտացոլված են Աստծո կողմից մարդկանց համար սահմանված կանոններ և օրենքներ, իրատներ և պատգամներ, Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի աշխարհ գալու մասին կանխատեսումներ։ (1 միավոր)

10. Թաղեոս առաքյալի նահատակության վայրում հետագայում կառուցվել է _____ Ս. Թաղեի վանքը, որն այժմ գտնվում է Իրանի տարածքում։ (1 միավոր)

11. Հիսուս Քրիստոսը հավատի ամենագոր ուժի մասին վկայում է. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե _____ հատիկի չափ հավատ ունենաք, այս լեռանը կասեք՝ տեղափոխվի՛ր այստեղից այնտեղ և կտեղափոխվի, և որևէ բան ձեզ համար անհնարին չի լինի»։ (1 միավոր)

12. Հայ վարքագրության հնագույն հուշարձաններից է Ագաթանգեղոսի պատմության մաս կազմող «_____», որտեղ ներկայացված է սրբի կյանքն ու գործունեությունը։ (1 միավոր)

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

13. Ժողովրդական սովորությունը համապատասխանեցնել նրա հետ կապված տոնին. (1 միավոր)

1. Նախորդ օրը գիշերը աղջիկները ծաղիկներ էին հավաքում, յոթ աղբյուրից ջուր էին լցնում սափորի մեջ, հավաքած ծաղիկներով փունջ էին կապում, դրանցով ծածկում սափորը և այն թողնում դրսում:
2. Ուրբաթ երեկոյան տների դռների մոտ կամ տանիքին սկուտեղով փոխինդ էին դնում:
3. Նախորդ օրը երեկոյան երիտասարդները ուռենու ճյուղեր էին կտրում և բերում եկեղեցի, իսկ տոնի օրը նորապսակ հարսները ամուսնանալուց հետո առաջին անգամ գնում էին իրենց հայրական տուն՝ հարազատներին այցելության:
4. Մարդիկ իրար հյուր էին գնում կամ ամբողջ ընտանիքով հավաքվում էին տոնական սեղանների մոտ և ուրախանում, այդ օրվա գլխավոր ուտելիքը յուղով փլավն էր:

- ա) Սուրբ Սարգսի տոն
- բ) Ծաղկազարդ
- գ) Բուն Բարեկենդան
- դ) Համբարձման տոն
- ե) Տյառնընդառաջ

1	
2	
3	
4	

14. Մանրանկարչության մեջ օգտագործվող գույները համապատասխանեցնել միջնադարյան աստվածաբան հեղինակների կողմից տրված խորհրդաբանական բացատրություններին. (1 միավոր)

- | | | | |
|------------|---|---|--|
| 1. կարմիր | ա. Աստվածային անհասանելի բնությունը | | |
| 2. կապույտ | բ. Հանուն մարդու փրկության՝ Քրիստոսի թափած արյունը | 1 | |
| 3. սև | գ. Քրիստոսի աստվածային բնությունը | 2 | |
| 4. սպիտակ | դ. Հրեշտակների առաքինությունը | 3 | |
| | ե. Սրբերի ճգնակեցությունը, նրանց մաքրությունն ու անարատ վարքը | 4 | |

1	
2	
3	
4	

№ 15

Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից

15. «Այստեղ տեսնել էր պետք մեր ամբողջ ազգի ուրախությունն ու ցնծությունը. զանգակների փողն էր հնչում, երիտասարդները գոչում էին, ծերերն աղաղակում էին և ցնծությամբ օրհնում Աստծուն, մանուկները խայտում էին, կանայք երկրպագությամբ ու լալով բոլորին զարհուրանք էին պատճառում, իսկ անօրենները նայելով զարմանում էին: Եվ ինչպես Փրկչի՝ Երուսաղեմ Սուրբ քաղաքը գալու օրը մեծ ուրախությամբ ընդառաջ եկան, նույնպես այսօր եղավ հայերիս համար...: Եվ մեծամեծերն ու փոքրերը, հոգևորականներն ու աշխարհականները մեզ ու մեր ժողովը սիրով ընդունեցին և մեր բոլոր եղբայրներին ողջունեցին որպես առաքյալների ու Աստծո հրեշտակների»:

1. Ո՞ր պատմիչն է մեջբերված հատվածի հեղինակը: (1 միավոր)

№ 16-17

Նկար-առաջադրանք՝ կազմված երկու հարցից

16.

(2 x 0,5 = 1 միավոր)



1. Ո՞վ է պատկերված նկարում:

(0,5 միավոր)

2. Հայոց ո՞ր կաթողիկոսն է նրան լիազորել մեծ տերություններին ներկայացնելու հայկական բարենորոգումների հարցը: (0,5 միավոր)

17.



1. Ո՞ր եկեղեցին է պատկերված նկարում:

(0,5 միավոր)

2. Ո՞վ է ճարտարապետը:

(0,5 միավոր)

№ 18-19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Բերված պնդումներից *n* ՞ր երկուսն են սխալ.

(2 x 1 = 2 միավոր)

- 1) Վեդարը սրածայր գլխադիր է. այն կրում են բացառապես Հայոց եկեղեցու կուսակրոն հոգևորականները:
- 2) Խույրը ձախ ուսից վար իջնող լայն ժապավեն է. մոտիկ լինելով սրտին՝ այն խորհրդանշում է Տիրոջ լուծը սրտանց կրելու պատրաստակամությունը:
- 3) Ութաթև կեռիսաչը կամ աստղը հայերը հնում համարում էին հավերժության խորհրդանիշ:
- 4) Մկրտության ավագանը մատնանշում է չորս կարգի իրողություն. ջրհեղեղ, Կարմիր ծով, Հայրական շնորհ և Մայր եկեղեցու արգանդ, որի մեջ վերստին ծնվում է մկրտվողը:
- 5) 1789 թ. Հովսեփ արք. Արղությանը և Հ. Լազարյանը ռուսական կառավարությանը ներկայացրին մի հիշատակագիր, որի մեջ հայոց դրոշի գույները ներկայացնում էին կարմիրը, կանաչը և կապույտը՝ Նոյան տապանի նշանով:
- 6) 1920 թ. հուլիսին ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի և նկարիչ Հակոբ Կոջոյանի հեղինակած զինանշանը ընդունվել է ՀՀ պետական զինանշան:
- 7) Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի վրա պատկերված Խաչագարդ թագը Ռուբինյան թագավորության խորհրդանիշն է:
- 8) Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի վրա պատկերված դաստառակը կամ թաշկինակը խորհրդանշում է Հայաստանի քրիստոնեացումը:

19. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են սխալ.

(2 x 1 = 2 միավոր)

- 1) Հայոց Մեծ թվականի առաջին տարին համապատասխանում է Փրկչական 551/552 թվականներին, ուստի միջնադարի գրավոր աղբյուրներում հիշվող հայոց Մեծ թվականին ավելացնում ենք 551 և ստանում ենք Փրկչական թվականը (այսօրվա տոմարը):
- 2) 371 թ. Ձիրավի ճակատամարտի ողջ ընթացքում Հայոց կաթողիկոս Ներսես Մեծը Նպատ լեռան գագաթին անդադար աղոթում էր և իր կերպարով ոգեշնչում հայ մարտիկներին:
- 3) «Գիրք հարցմանց» երկասիրությունում Գրիգոր Տաթևացին գրում է, որ զենքը թշնամիներին հալածելու համար է, որ Աստված զինական արվեստի միջոցով մարդուն սովորեցրեց, թե ինչպես թշնամիներից պաշտպանվի:
- 4) Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը իր եռահատոր «Ազգապատում» աշխատության մեջ շարադրել է Հայոց եկեղեցու ամբողջական պատմությունը:
- 5) Առավոտյան ժամերգության ընթացքում հոգևոր դասը խաչով, խաչվառով և Ավետարանով, երգելով նախ օրհնում է Արևելքը և այնտեղ գտնվող Հայոց հայրապետությունը՝ Ս. Իսաչի և Ավետարանի նշանով, հանուն Սուրբ Երրորդության, այնուհետև օրհնում և առ Աստված խնդրանք է ներկայացնում աշխարհի մյուս կողմերի համար:
- 6) Մատաղն արգելված է Մեծ պահքի ժամանակ և պահոց օրերին:
- 7) Երախայից պատարագը սկսվում է թափորից հետո, երբ պատարագիչ քահանան նորից խորան է բարձրանում, և շարունակվում է մինչև սպասարկող սարկավագը ժողովրդին ազդարարում է. «Մի՛ նք յերախայից, մի՛ նք ի թերահաւատից եւ մի՛ նք յապաշխարողաց եւ հանմաքից մերձեսցի յաստուածային խորհուրդս»:
- 8) Տնօրինքի ժամանակ քահանան օրհնում է հացը, ջուրը, աղը:
- 9) Քահանայությունը, որպես գիտական աստիճան, շնորհվում է արեղային:
- 10) Եպիսկոպոսն իրավունք ունի ձեռնադրել քահանաներ, սարկավագներ, դպիրներ և կատարել բոլոր խորհուրդները:

№ 20

Շարադրանք

(2 միավոր)

Ներկայացրե՛ք ավանդական հայ ընտանիքը: Ձեր կարծիքով՝ ազգային-քրիստոնեական արժեքների պահպանումն ընտանիքում ինչպե՞ս կարող է նպաստել հայ տեսակի պահպանմանն ու հարատևմանը: